

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղ

2022-2026թթ. կրթական ծրագրերի վերջնարդյունքները

1. Բնական գիտությունների ֆակուլտետ

1.1. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» կրթական ծրագիր

<p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</p> <p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն <i>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</i></p> <p>Ա1.Ներկայացնելու և բացատրելու ծրագրավորման ժամանակակից սկզբունքները, մեթոդները (կառուցվածքային մեթոդ, օբյեկտակողմնորոշված մեթոդ, համակարգային մեթոդ, միկրոկոնստրուկտիվների և սարքերի ծրագրավորման մեթոդ), արդի տեղեկատվական տեխնոլոգիաները:</p> <p>Ա2.Թվարկելու ծրագրավորման արդի լեզուները, դասակարգելու և ներկայացնելու դրանց առանձնահատկությունները, կիրառման ոլորտները, հիմնավորելու տարբեր խնդիրների ծրագրային իրականացման համար կոնկրետ լեզվի ընտրությունը:</p> <p>Ա3.Բացատրելու զուգահեռ և բաշխված ծրագրավորման, տարբեր լեզուներով աջակցվող web-ծրագրավորման, գրաֆիկական միջերեսի ծրագրավորման, տեխնիկական համակարգերի և միկրոկոնստրուկտիվների ծրագրավորման առանձնահատկությունները, սկզբունքները և մեթոդները, ներկայացնելու ծրագրերի օրինակներ:</p> <p>Ա4.Ներկայացնելու գիտական և տնտեսական տարբեր ոլորտներում մեծածավալ տվյալների մշակման և վերլուծության մեթոդները, ծրագրային համակարգերի կիրառման սկզբունքները, բացատրելու և վերլուծելու դրանց ներդրման նպատակահարմարությունը և արդյունավետությունը, բերելու ծրագրային համակարգերի կիրառման հայտնի օրինակներ:</p> <p>Ա5.Ներկայացնելու և նկարագրելու ժամանակակից համակարգիչների, գերհամակարգիչների և համակարգչային ցանցերի ճարտարապետական առանձնահատկությունները, անվտանգության և պաշտպանվածության ապահովման սկզբունքները և մեթոդները, կիրառման ոլորտները և ուղղությունները, մեկնաբանելու դրանց օգտագործման հնարավորությունները ՀՀ-ում և տարածաշրջանում:</p> <p>Ա6.Ներկայացնելու ռոբոտատեխնիկական օբյեկտների ծրագրային ապահովման սկզբունքները և դրանց վրա հիմնված ավտոմատ կառավարման համակարգերի սխեմատեխնիկական իրականացման հիմնական հասկացությունները և եղանակները:</p> <p>Ա7.Բացահայտելու, ներկայացնելու, վերլուծելու և մեկնաբանելու ծրագրային համակարգերի ապարատային և ծրագրային լուծումների մարքետինգային բնութագրիչները և ցուցանիշները:</p>
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ <i>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</i></p> <p>Բ1.Լուծելու մասնագիտական ոլորտի խնդիրներ՝ օգտագործելով դասական մաթեմատիկայի հիմնարար գաղափարները, մոդելները, սկզբունքները, դրույթները, խնդիրների լուծման եղանակները:</p> <p>Բ2.Օգտվելու խնդիրների մաթեմատիկական մոդելավորման և մոդելների ծրագրավորման մեթոդներից, մաթեմատիկական վերլուծական և վիճակագրական գործիքներից, էլեկտրոնային համակարգերի նախագծման և տեխնիկապես իրագործման ծրագրային և ապարատային միջոցներից, ինչպես նաև վիրտուալ հարթակների գործիքակազմից:</p> <p>Բ3.Կատարելու բնագիտական, տնտեսագիտական, ֆինանսական և հումանիտար ոլորտների խնդիրների մաթեմատիկական մոդելավորում, տարանջատելու անընդհատ և դիսկրետ մոդելները, ընտրելու, հիմնավորելու, հետազոտելու, համեմատելու այդ մոդելների առանձնահատկությունները, իրականացման եղանակները և մեթոդները, մշակելու այդ խնդիրների լուծման լավագույն ալգորիթմներ՝ ապահովելով և գնահատելով ծրագրային համակարգերի որակի ցուցանիշները:</p> <p>Բ4.Իրականացնելու հետազոտություններ՝ մասնագիտական ոլորտում, ուսումնասիրելու</p>

միջառարկայական կապերը, խնդիրների լուծման համար կիրառելու նորարարական և առաջադեմ մոտեցումներ և տեխնոլոգիաներ, մշակելու ծրագրային համակարգեր:

F5.Նախագծելու անվտանգ և պաշտպանված հաշվողական համակարգեր և ցանցեր՝ կիրառելով համակարգչային և ցանցային ճարտարապետության առանձնահատկությունները, դրանց ապարատային և տարրային հենքի կառուցվածքը:

F6.Հավաքագրելու մասնագիտական տեղեկատվություն ժամանակակից տեխնոլոգիական լուծումներ պահանջող տարբեր պարզ և բարդ խնդիրների լուծման համար՝ օգտագործելով հաղորդակցման և որոնողական ժամանակակից տարբեր համակարգեր, նորարարական մեթոդներով իրականացնելու հավաքագրված մասնագիտական տվյալների քանակական և որակական վերլուծություններ, կատարելու տրամաբանական եզրահանգումներ:

F7.Նախագծելու և կառուցելու ավտոմատ կառավարման համակարգեր (ռոբոտներ), մշակելու դրանց սխեմատեխնիկական իրականացման միջոցները և ծրագրային ապահովումը:

F8.Ուսումնասիրելու ծրագրային համակարգերի սպառման շուկաները, պլանավորելու, նախագծելու և կառուցելու շուկայում պահանջված ծրագրային համակարգեր, հավաքագրելու և վերլուծելու ծրագրային համակարգերի ներդրման և շահագործման ցուցանիշները:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ2. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ3. Որոշելու իր հետագա ուսումնառության կամ աշխատանքի ուղիները և զարգացման միտումները՝ վերլուծելով մասնագիտական ոլորտի առկա խնդիրներն ու գնահատելով սեփական հնարավորությունները:

Գ4. Մտանձնելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ5. Մասնագիտական հանրույթում կառուցելու տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ բանավոր ու գրավոր խոսք մայրենի և որևէ օտար լեզվով:

Գ6. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

2. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

2.1. «Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. Բացահայտելու լեզվաբանական և գրականագիտական (մասնագիտական) բնագավառների արդի հիմնարար հասկացությունները, տեսություններն ու մեթոդները, տվյալ կրթական ոլորտի հիմնախնդիրները:

Ա2. Ճանաչելու լեզվաբանական և գրականագիտական մեթոդաբանական ուղղությունները:

Ա3. Կիրառելու միջառարկայական գիտելիքներն արդի լեզվաբանական և գրականագիտական հետազոտություններում գիտական վերլուծություններ, խմբագրական գործ, թարգմանական ծրագրեր իրականացնելիս, անհատական կամ խմբային հետազոտություններ կատարելիս:

Ա4. Իրականացնելու սեփական մասնագիտական գործունեությունը՝ սահմանված նպատակներին ու խնդիրներին համահունչ:

Ա5. Հիմնավորելու լեզվաբանական և գրականագիտական բնագավառներում կատարած

<p>ուսումնասիրության արդյունքները:</p> <p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. Կիրառելու լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները:</p> <p>Բ2. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու բանասիրությանը վերաբերող բազմաթիվ հարցեր, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, համակարգելու և ցուցաբերելու քննական մոտեցում բանասիրական տարբեր փաստերի, տարաբնույթ տեքստերի նկատմամբ:</p> <p>Բ3. Օգտագործելու ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրություններ կատարելիս:</p> <p>Բ4. Բացատրելու և հանրությանը ներկայացնելու հայոց լեզվի և գրականության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստեր:</p> <p>Բ5. Դրսևորելու ստեղծագործական մոտեցում՝ մասնագիտական խնդիրներին տարբեր լուծումներ առաջադրելու համար, ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու մասնագիտական-հետազոտական գործունեություն:</p> <p>Բ6. Օգտագործելու բնագրային նյութերը լեզվաժողովրդական, բարբառագիտական և գրականագիտական ուսումնասիրություններում:</p>
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1. Կիրառելու մասնագիտական գիտելիքները գործնական-հետազոտական գործունեություն ծավալելիս, տարբեր աղբյուրներից հայթայթելու մասնագիտական արդիական տեղեկատվություն և կիրառելու դրանք հետազոտությունների արդյունքներում:</p> <p>Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցելու բանավոր և գրավոր խոսքը, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ3. Քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</p> <p>Գ4. Մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և գուզադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը:</p> <p>Գ5. Կառավարելու մասնագիտական գործառնություններ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:</p> <p>Գ6. Ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>

2.2. «Պատմություն» կրթական ծրագիր

<p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</p> <p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա1. Մեկնաբանելու արդի պատմագիտության զարգացման հիմնական սկզբունքները, հայեցակարգային հիմնական մոտեցումները, մեթոդաբանական գլխավոր ուղղությունները և պատմության զարգացման օրինաչափությունները:</p> <p>Ա2. Ներկայացնելու պատմության գնահատման մեթոդաբանական ուղղությունները:</p> <p>Ա3. Բացահայտելու պատմական հիմնական օրենքների, մարդկային հասարակության զարգացման օրինաչափությունների ու փիլիսոփայական կատեգորիաների միջև եղած օրինաչափ կապը:</p> <p>Ա4. Ներկայացնելու ու մեկնաբանելու մարդկային քաղաքակրթության ծագման, հասարակական հարաբերությունների սկզբնավորման օջախները, դրանց գործընթացները և օրինաչափությունները:</p> <p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ</p>

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

F1. Ներկայացնելու, նկարագրելու, մեկնաբանելու ու գնահատելու հայոց և համաշխարհային պատմության բազմաթիվ հարցեր:

F2. Մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու և բացահայտելու պատմագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, փաստարկներ, առանձին բարդություն չներկայացնող խնդիրներ ու լուծումներ:

F3. Համացանցից, սկզբնաղբյուրներից, հնագիտական և ազգագրական տարաբնույթ աղբյուրներից հավաքագրելու պատմությանը վերաբերող տեղեկատվություն, ստացված տվյալները շարադրելու, խմբագրելու, մշակելու, պահպանելու և փոխանցելու, փաստագրելու և համակարգելու, ցուցաբերելու քննական մոտեցում պատմական փաստերի նկատմամբ:

F4. Համադրելու պատմագիտական հետազոտությունների արդյունքները համապատասխան գիտական տեսության հետ, հիմնավորելու պատմական հետազոտության համար ընտրված մեթոդաբանության արդյունավետությունը:

F5. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

F6. Ինքնուրույն կամ համապատասխան ղեկավարման ներքո ծավալելու պատմաբանի մասնագիտական գործունեություն:

F7. Վերլուծելու մասնագիտական խնդիրները ու պատմական գործընթացները, գտնելու խնդիրների լուծման ճանապարհները, օգտագործելով մասնագիտական և այլ դասընթացներից ստացված գիտելիքները՝ բանախոսելու ու բանավիճելու ակադեմիական միջավայրում:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրությամբ:

Գ2. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ3. Գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ4. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ5. Տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում պատմագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

Գ6. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

2.3. «Անգլերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. մեկնաբանելու ժամանակակից անգլիական և ֆրանսիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,

Ա2. արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական անգլերենով (առնվազն B2) և ֆրանսերենով (առնվազն B2) և մեկնաբանելու նրանց առանձնահատկությունները, բնութագրելու անգլո-ամերիկյան և ֆրանսիական մշակույթները, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, ինչպես նաև անգլո-ամերիկյան պատմության, տնտեսագիտության և բնական գիտությունների ուսումնասիրության արդի հիմնահարցերը,

Ա3. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

<p>U4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,</p> <p>U5. ներկայացնելու անգլերենի և ֆրանսերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ոճագիտության հիմնադրությունները և թարգմանաբանության հայեցակարգերը,</p> <p>U6. ներկայացնելու և մեկնաբանելու անգլերենի և ֆրանսերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, թվարկելու երկրագրական տեղեկություններ Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի. Ֆրանսիայի և ֆրանկոֆոն երկրների մասին:</p>
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. հետազոտելու, վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերեն, անգլերեն, ֆրանսերեն լեզուներով հավաքագրած և մշակված նյութի վերաբերյալ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,</p> <p>Բ2. պլանավորելու, մշակելու, վերլուծելու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր S2S-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,</p> <p>Բ3. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,</p> <p>Բ4. ընտրելու, վերլուծելու և ադապտացնելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անկանխատեսելի իրավիճակներում արդյունավետ միջմշակութային հաղորդակցման և թարգմանություններ կատարելու նպատակով,</p> <p>Բ5. կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի մոդիֆիկացնելու և ադապտացնելու մասնագիտական գործառնությունները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:</p> <p>Բ6. վերլուծելու և մեկնաբանելու անգլերենի և ֆրանսերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ոճական երևույթները և անգլերեն գեղարվեստական տեքստերին բնորոշ ոճական հնարները:</p> <p>Բ7. կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:</p>
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,</p> <p>Գ2. գնահատելու, վերլուծելու ու գուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին իր ազգի և պետության ինտեգրման իրագործմանը,</p> <p>Գ3. գուգադրելու անգլերենի և ֆրանսերենի լեզվամշակութային արժեհամակարգը ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,</p> <p>Գ4. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, մշակելու և ներկայացնելու տեղեկատվությունը,</p> <p>Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:</p>

2.4. «Ֆրանսերեն լեզու և գրականություն» կրթական ծրագիր

<p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</p>
<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա1. մեկնաբանելու ժամանակակից ֆրանսիական և անգլիական բանասիրության հիմնական հասկացությունները, տեսական դրույթները և լեզվի ուսումնասիրության առաջադեմ մեթոդները,</p>

U2. արտահայտվելու կենցաղային, գործնական և մասնագիտական ֆրանսերենով (առնվազն B2) ու անգլերենով (առնվազն B2) և մեկնաբանելու նրանց առանձնահատկությունները, տարբերակելու ֆրանսիական և անգլոամերիկյան մշակույթները, արտասահմանյան գրականության տարբեր ուղղությունները, մատնանշելու Հայաստանի և Ֆրանսիայի պատմության, նրանց տնտեսագիտական ու բնագիտական ուսումնասիրությունների արդի հիմնահարցերը,

U3. կառուցելու տրամաբանորեն ճիշտ, փաստարկված, հստակ բանավոր և գրավոր խոսք՝ վերլուծությունների, հաշվետվությունների, հետազոտությունների տեսքով,

U4. ներկայացնելու բանասիրության և մյուս հասարակական գիտությունների միջև առկա միջգիտակարգային կապերն ու հարաբերությունները,

U5. ներկայացնելու ֆրանսերենի և անգլերենի հնչյունաբանության, բառագիտության, քերականության և ռճագիտության հիմնադրույթները և թարգմանաբանության հայեցակարգերը,

U6. ներկայացնելու և մեկնաբանելու ֆրանսերենի և անգլերենի ծագման, պատմական զարգացման օրինաչափությունները պայմանավորող լեզվական և արտալեզվական գործոնները, երկրագիտական տեղեկություններ Ֆրանսիայի և ֆրանկոֆոն երկրների, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի մասին:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. հետազոտելու, վերլուծելու և եզրահանգումներ կատարելու հայերենով, ֆրանսերենով, անգլերենով մշակված նյութի վերաբերյալ՝ ցուցաբերելով քննադատական նորարարական մոտեցում ինքնուրույն հետազոտական աշխատանք իրականացնելիս,

Բ2. պլանավորելու, մշակելու, վերլուծու և մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը ներկայացնելու տարբեր տեղեկատվական աղբյուրներից հավաքագրած, հիմնավորված գաղափարներ, փաստարկներ և խնդիրներ՝ կիրառելով տարբեր ՏՀՏ-ներ (word, excel, power-point) աղյուսակ, գծապատկեր, քարտեզ, դիագրամ, շնորհանդես պատրաստելու նպատակով,

Բ3. կիրառելու գիտելիքները պրակտիկայում՝ միջմշակութային առնչություններին նպաստելու համատեքստում, ձևակերպելու խնդիրները և դրանց լուծման ուղիները,

Բ4. ընտրելու, վերլուծելու և հաղորդելու տնտեսագիտության, բնագիտության և հումանիտար ոլորտներից ձեռք բերած հիմնարար միջգիտակարգային գիտելիքները՝ անհրաժեշտության դեպքում իրականացնելու համար միջմշակութային հաղորդակցում և թարգմանություններ.

Բ5. կազմակերպելու և կառավարելու, ըստ իրավիճակի ձևափոխելու և հարմարեցնելու մասնագիտական գործառույթները և ծրագրերը՝ գիտակցելով առանձին անհատների հետ կամ թիմում՝ մասնագիտական զարգացման համար ունեցած իր պատասխանատվությունը:

Բ6. վերլուծելու և մեկնաբանելու ֆրանսերենի և անգլերենի հնչյունաբանական, ձևաբանական, քերականական և ռճական երևույթները գեղարվեստական տեքստերին բնորոշ ռճական հնարները:

Բ7. կիրառելու թեստավորման սկզբունքները միջազգային թեստերի հանձնման ժամանակ:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը՝ մասնագիտական փոխգործակցության, հասարակական ու համայնքային շփումների համատեքստում,

Գ2. գնահատելու, վերլուծելու ու զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը և այն ծառայեցնելու, իր ազգի և պետության ինտեգրման համաշխարհային ժողովրդավարական սկզբունքներին

Գ3. զուգադրելու ֆրանսերենի և անգլերենի լեզվամշակութային արժեհամակարգն ու պատմամշակութային փորձը, նախաձեռնելու և ղեկավարելու նորարարական գործընթացներ՝ դրսևորելով մասնագիտական բարեխղճություն և ինքնուրույնություն,

Գ4. օգտվելու տեղեկատվական տարբեր աղբյուրներից, հետազոտելու, փոխկապակցելու և ներկայացնելու տեղեկատվությունը,

Գ5. կիրառելու միջառարկայական գիտելիքները տեսական և գործնական բնույթի աշխատանքներում:

Գ6. կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

2.5. «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագիր

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Ա1. ներկայացնելու մանկավարժական տեսությունների զարգացման պատմությունը, կրթության հիմնական հասկացությունները, հայեցակարգերը, կրթական համակարգերի զարգացման փուլերը

Ա2. նկարագրելու երեխայի և մեծահասակի, որպես սուբյեկտի, հոգեբանական գործունեության առանձնահատկությունները և սոցիալականացման օրինաչափությունները ու հաղորդակցման ձևերը

Ա3. բացատրելու հոգեբանամանկավարժական գիտելիքների տարածման մեթոդները:

Ա4. ներկայացնելու լեզվաբանական տեսությունները և արդի լեզվակրթության քաղաքականության հիմնախնդիրները, վերլուծելու ռուսաց լեզվի ազգակից կապերը. նրա տիպաբանական կապերը մյուս հնդեվրոպական՝ հայերեն, անգլերեն, սլավոնական լեզուների հետ:

Ա5. ներկայացնելու ռուսաց լեզվի բոլոր բաժինների (հնչյունաբանություն, բառագիտություն, շարահյուսություն, ձևաբանություն) հիմնական սկզբունքները, ժամանակակից ռուսաց լեզվի տեսությունները, նրա պատմությունը՝ իր առավել կարևոր գրավոր հուշարձաններով, արդի փուլում զարգացման միտումները:

Ա6. ներկայացնելու ռուս գրականության հիմնական շրջանները (բանահյուսություն, հին ռուսական գրականություն, 18-րդ, 19-րդ, 20-րդ դարերի գրականություն և ռուս արտերկրյա գրականություն) և գրական ստեղծագործության վերլուծության սկզբունքները,

Ա7. ներկայացնելու գրականության տեսության հիմունքները, ռուս գրականության հիմնական

ուղղությունները, ինչպես նաև մեկնաբանել ռուս գրաքննադատական մտքի զարգացումը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, ղեկավարելու, վերահսկելու, գնահատելու դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը,

Բ2. կիրառելու տարբերակման և անհատականացման սկզբունքը ուսուցման գործընթացում,

Բ3. կիրառելու կրթության բնագավառում հետազոտությունների իրականացման վերաբերյալ փորձարարական տվյալների հավաքագրման և մշակման տեխնոլոգիաներ,

Բ4. վերլուծելու ժամանակակից գրական ռուսերենի հիմնախնդիրները, տիրապետել ռուսերեն տեքստի լեզվաբանական և պատմաբանասիրական վերլուծության մեթոդիկայի հիմունքներին,

Բ5. վերլուծելու գրականության պատմական զարգացումը և ժամանակակից գրական գործընթացի օրինաչափությունները,

Բ6. կիրառելու լեզվաբանական վերլուծության հիմնական մեթոդները,

Բ7. օգտագործելու մասնագիտական բառապաշարը իր հետագա գործունեության ընթացքում,

Բ8. կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.

Գ1. մայրենի, ռուսերեն և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն,

Գ2. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը,

Գ3. գիտակցելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, հետամուտ լինելու ժողովրդավարական սկզբունքերի իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը,

Գ4. կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար,

Գ5. տիրապետելու բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում ուսումը շարունակելու համար,

Գ6. օգտվել տեղեկատվության (ինտերնետ ռեսուրսներ, գիտական հոդվածներ), տարատեսակ էլեկտրոնային աղբյուրներից գրադարաններ,

Գ7. կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն,

Գ8. կառավարելու, նախագծելու, կառուցելու, իրականացնելու և գնահատելու սեփական մասնագիտական գործունեությունը:

2.6. «Հոգեբանություն» կրթական ծրագիր

<p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</p>
<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Ա1. նկարագրելու հոգեբանության հիմնական մեթոդաբանական սկզբունքները, արդի և հիմնարար տեսությունները, ներկայացնելու դրանց առնչվող հայեցակարգերը, մոտեցումներն ու հասկացությունները, բացատրելու դրանց կիրառական նշանակությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում,</p> <p>Ա2. բացահայտելու հոգեբանական հիմնախնդիրները՝ մարդու հոգեկան զարգացման օրինաչափությունները, մեխանիզմները, առանձնահատկությունները, հոգեկանի նորմալ և ախտաբանական դրսևորումները,</p> <p>Ա3. սահմանելու հոգեբանական հետազոտության կազմակերպման, տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծության և մեկնաբանման հիմնական մեթոդները, մատնանշելու դրանց կիրառման ուղիները, հնարավորությունները և սահմանափակումները,</p> <p>Ա4. ճանաչելու հոգեբանության հիմնարար և կիրառական բնագավառներին առնչվող հոգեբանական փաստերը և օրինաչափությունները, բացատրելու դրանց դերն ու նշանակությունը անհատի և հասարակության կյանքում,</p> <p>Ա5. թվարկելու հոգեբանի մասնագիտական գործունեության հիմնական էթնիկական սկզբունքները, մատնանշելու դրանց նշանակությունը և պահպանման անհրաժեշտությունը,</p> <p>Ա6. ճանաչելու հոգեկան խանգարումների յուրաքանչյուր տեսակի ախտանիշները և դրանց դասակարգման համակարգերը /DSM-IV- R, ICD-10/:</p>
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. կիրառելու հոգեբանական հետազոտության հիմնական մեթոդները ըստ նշանակության, վերլուծելու և մեկնաբանելու ստացված արդյունքները մասնագիտական (աշխատանքի կամ ուսումնառության) խնդիրների լուծման համար:</p> <p>Բ2. գործնականում կիրառելու հոգեախտորոշիչ մեթոդներ, մասնագիտական վերլուծության օգնությամբ կատարելու հիմնավորված եզրահանգումներ,</p> <p>Բ3. տարբերակելու և մեկնաբանելու հոգեբանական երևույթները, մարդու կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում առկա հոգեբանական խնդիրները, իրականացնելու այդ խնդիրների լուծմանն ուղղված գործողություններ,</p> <p>Բ4. համադրելու հոգեբանական աշխատանքի տարբեր մոտեցումները, գտնելու մասնագիտական լուծումներ և ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում,</p> <p>Բ5. կազմակերպելու իր աշխատանքային և/կամ ուսումնական գործունեությունը ստացած տեսագործնական գիտելիքներին համապատասխան:</p>
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Գ1. համագործակցելու տվյալ և հարակից ոլորտների այլ մասնագետների հետ, աշխատելու մասնագիտական միջավայրում, պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p> <p>Գ2. կիրառելու ժամանակակից S2S-ները գիտելիքի փոխանցման գործընթացը և մասնագիտական գործունեությունը արդյունավետ իրականացնելու և դյուրացնելու համար:</p> <p>Գ3. քննադատորեն վերլուծելու և եզրահանգումներ կատարելու տեսությունների, ուսումնասիրությունների և կիրառական հիմնախնդիրների վերաբերյալ:</p> <p>Գ4. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր,</p> <p>Գ5. ստեղծագործաբար կիրառելու ձեռքբերված գիտելիքը, ընկալելու և տարածելու նոր տեղեկատվությունը:</p>

2.7. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագիր

<p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները.</p>
<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա1. ներկայացնելու մանկավարժության և դասավանդման մեթոդիկայի (մասնավորապես՝ սկզբնական կրթության) սկզբունքներն ու հիմնական դրույթները, կրթական նոր տեխնոլոգիաները, Ա2. բացատրելու կրտսեր դպրոցականի ֆիզիկական, հոգեկան ու մտավոր զարգացման առանձնահատկություններն ու օրինաչափությունները, Ա3. սահմանելու երեխաների և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները, մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները կարգավորող էթիկական և իրավական նորմերը, Ա4. մատնանշելու ՀՀ կրթական քաղաքականությունը, կրթության բնագավառի օրենսդրությունը, նորմատիվ և իրավական ակտերը. Ա5. ներկայացնելու հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտամաթեմատիկական առարկաների հիմնական դրույթները, Ա6. նկարագրելու հայ ժողովրդի պատմության և նրա արդի քաղաքագիտական զարգացումները. Ա7. մատնանշելու քաղաքացիական պաշտպանության և բնապահպանական հիմնախնդիրները:</p>
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ. Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. պլանավորելու, կազմակերպելու, իրականացնելու, դեկավարելու, վերահսկելու, գնահատելու կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական գործընթացը, Բ2. լուծելու մասնագիտական խնդիրներ, պլանավորելու և իրականացնելու հետազոտություններ, կայացնելու որոշումներ, Բ3. կազմակերպելու իր աշխատանքային գործունեությունը՝ հենվելով կրթության բնագավառի օրենքների հիմնադրույթների վրա, Բ4. վերլուծելու և գնահատելու սեփական մասնագիտական աճը, պլանավորելու հետագա մասնագիտական զարգացումը նաև ինքնակրթության ճանապարհով, Բ5. մեկնաբանելու սեփական մասնագիտության էությունն ու սոցիալական նշանակությունը, դրսևորելու կայուն հետաքրքրություն, Բ6. տարբերակելու դասվարի գործառույթներն այլ մասնագետների հետ համատեղ աշխատանքում:</p>
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ1. իրականացնելու մասնագիտական գործունեություն, Գ2. գրագետ, ճիշտ ձևակերպելու իր բանավոր և գրավոր խոսքը, մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվելու հանրության հետ, գնահատելու և զուգադրելու լեզվական, մշակութային և հասարակական տեղեկատվությունը, Գ3. պատրաստելու զեկուցումներ, ներկայացնելու հետազոտությունների արդյունքները, վարելու գիտական բանավեճեր, Գ4. գիտակցելու անձնական պատասխանատվություն ազգի և պետության հանդեպ, պահպանելու ազգային և համամարդկային արժեքները: Գ5. արդյունավետորեն շփվելու և համագործակցելու ինչպես անհատական, այնպես էլ խմբային նախագծերում: Գ6. կատարելու հասարակական և մասնագիտական ուսումնասիրություններ և ընթացքում ստեղծելու միջառարկայական կապեր:</p>

3. Տնտեսագիտության ֆակուլտետ

3.1. «Զրուսաշրջություն» կրթական ծրագիր

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները
<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>Ա1. պարզաբանելու զբոսաշրջության հիմնական հասկացությունները, կատեգորիաները, տեսությունները, Ա2. մեկնաբանելու զբոսաշրջության կազմակերպման սկզբունքները, մասնագիտական նորմատիվ փաստաթղթերը, Ա3. բացահայտելու զբոսաշրջության առանձնահատկությունները և զարգացումները տարածաշրջանային ու տեղական մակարդակներում, Ա4. վերլուծելու զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացման գործոնները և արդի միտումները, տարատեսակները, աշխարհագրությունը, Ա5. գնահատելու զբոսաշրջության զարգացման գործում ազգագրական, կրոնական արժեքների, ազգային արվեստի և ճարտարապետության դերը, նշանակությունը, Ա6. տարբերակելու զբոսաշրջության ուսումնասիրությունների առանձին մոտեցումները, դրանց առանձնահատկությունները (սոցիոլոգիական, տնտեսագիտական, մշակութաբանական, աշխարհագրական և այլն):</p>
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <p>Բ1. իրականացնելու զբոսաշրջային գործունեության կազմակերպման պլանավորում, նախագծերի կազմում և մոդելավորում, Բ 2. կատարելու մասնագիտական հետազոտական աշխատանք, վերլուծություններ և գնահատումներ՝ կիրառելով ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, Բ3. գնահատելու զբոսաշրջության ռեսուրսներն ու ենթակառուցվածքները, Բ4. իրականացնելու մարքեթինգի և մենեջմենթի վերաբերյալ վերլուծություններ զբոսաշրջության և ռեկրեացիայի ոլորտում, Բ 5. ցուցաբերելու հյուրընկալության կազմակերպման և զբոսաշրջային ծառայությունների սպառողների հետ շփման բարձր կուլտուրա:</p>
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p>Գ1. ազատ օգտվելու մայրենի և օտար լեզուներով տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, Գ2. կիրառելու գիտելիքները պրակտիկայում, ձևակերպելու և լուծելու խնդիրներ, Գ3. բանավոր և գրավոր հաղորդակցվելու մասնագիտական հանրության և հաճախորդների հետ, Գ4. կատարելու թիմային աշխատանք, Գ 5. պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:</p>

3.2. «Ֆինանսներ» կրթական ծրագիր

10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները
<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի հաջող ավարտին ուսանողը ունակ կլինի.</p> <p>Ա1. ներկայացնելու վերլուծությունների մաթեմատիկական կանոնները և հնարքները, Ա2. ներկայացնելու ֆինանսների կառավարման ժամանակակից մոտեցումները և մեթոդները, Ա3. բացատրելու վիճակագրական տվյալների կազմման և վերլուծության ձևերը, Ա4. մեկնաբանելու բանկային գործունեության հիմնարար սկզբունքները, Ա5. ներկայացնելու ֆինանսական հաշվառման էությունը և բացատրելու հաշվետվությունների պատրաստման և ստուգման ձևերը, Ա6. համեմատելու ֆինանսական մաթեմատիկայի, մաթեմատիկական մոդելավորման մեթոդները, և</p>

ներկայացնելու մասնագիտությանը առնչվող ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը,

U7. բացահայտելու տնտեսագիտական տարբեր խնդիրների ծագման պատճառները և ընտրելու կառավարման մոտեցումներ,

U8. մեկնաբանելու միկրո և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, քննարկելու գոբալ և լոկալ շուկաների հիմնախնդիրները,

U9. կապակցելու ֆինանսների, վիճակագրության, հաշվապահական հաշվառման մասին գիտության մեջ օգտագործվող հիմնական հասկացությունները:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ 1. կիրառելու տնտեսամաթեմատիկական անալիզի մեթոդները և գործիքակազմը արդի տնտեսական հիմնախնդիրների մոդելավորման համար,

Բ 2. կատարելու գիտահետազոտական աշխատանքներ և գործնական վերլուծություններ օգտագործելով վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ,

Բ3. կիրառելու մաթեմատիկական հասկացությունները, սիմվոլները քանակական և որակական հարաբերությունների մեկնաբանման համար,

Բ4. չափելու և գնահատելու ֆինանսական ռիսկերը, մշակելու ռիսկերի նվազեցման ստրատեգիա,

Բ5. քննարկելու ընտրված տնտեսական քաղաքականությունները և ամփոփելու քննարկման արդյունքները,

Բ6. տարբեր հարցերի շուրջ որոշումների կայացման համար ղեկավարի օգնությամբ իրականացնելու հետազոտություն և պատրաստելու անհրաժեշտ նյութեր,

Բ7. մասնագիտական վերլուծություններով և հաշվարկներով գնահատելու կազմակերպության ֆինանսների կառավարման արդյունավետությունը, ներկայացնելու վերլուծությունից բխող եզրակացություններ,

Բ 8. կիրառելու տնտեսության ֆինանսական հատվածի կառավարման և գնահատման մեթոդները,

Բ 9. գնահատելու բանկերի ֆինանսական կայունությունը, բացահայտելու բանկային համակարգի ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները,

Բ10. կատարելու նախագծերի համար անհրաժեշտ տեխնիկատնտեսական հաշվարկներ, կիրառելով տարբեր համակարգչային ծրագրեր:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. Կիրառելու սոցիալ-տնտեսագիտական գիտելիքները և մեթոդները մասնագիտական և հասարակական խնդիրները լուծելու ժամանակ:

Գ2. Մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ փաստարկված և հստակ կառուցելու բանավոր ու գրավոր խոսք մասնագիտական հանրություն:

Գ3. Պահպանելու մասնագիտական էթիկայի նորմերը:

Գ4. Ստանձնելու անձնական պատասխանատվությունը ազգի և պետության հանդեպ, իր գործունեությամբ նպաստելու ժողովրդավարական սկզբունքների իրագործմանը, ազգային և համամարդկային արժեքների տարածմանը:

Գ 5. Կառավարելու մասնագիտական գործառույթներ ու ծրագրեր, ղեկավարելու աշխատանքային թիմ, աշխատելու թիմում և պատասխանատվություն ստանձնելու նրա անդամների մասնագիտական գործունեության համար:

Գ 6. Տիրապետելու բավարար գիտելիքների ու կարողությունների՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում համապատասխան բնագավառում ուսումը շարունակելու համար և բացահայտելու իր կրթական պահանջմունքները և/կամ կարիերայի հնարավորությունները հետագա ուսումնառության ուղիները որոշելու համար:

Գ 7. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:

Գ8. Կիրառելու ՏՀՀ-ները մասնագիտական ոլորտներում խնդիրներ լուծելու և աշխատանքները արագացնելու համար:

Գ9. Վերլուծելու և եզրահանգումներ անելու՝ դրսևորելով քննական մտածողություն, ինչպես նաև ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջադրելու համար:

4. Կիրառական արվեստի ֆակուլտետ

4.1. «Դիզայն» կրթական ծրագիր

<p>10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները</p>
<p>Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա1. Միջավայրի, արդյունաբերական և հագուստի դիզայնի խնդիրների լուծման ընթացքում ցուցաբերելու գեղագիտության, արվեստի և դիզայնի տեսության ու պատմության իմացություն: Ա2. Ներկայացնելու դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունները, տեսությունները և մեթոդները առաջադեմ գիտելիքների հետ միասին:</p>
<p>Բ. Գործնական մասնագիտական կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ1. Ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում և առաջարկելու ինքնուրույն լուծումներ միջավայրի, արդյունաբերական կամ հագուստի դիզայնի նախագծերի մշակման ժամանակ՝ հաշվի առնելով դիզայնի ոլորտում եղած ժամանակակից միտումները և սպառողի (պատվիրատուի) պահանջները: Բ2. Ստեղծելու և վերարտադրելու վիզուալ ուղերձներ՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաներ և գործիքներ /գծագրություն, հեռանկար, մանրակերտի ստեղծում, ժամանակակից տառատեսակներ, լուսանկարչություն, եռաչափ մոդելավորում/ Բ3. Ինքնուրույն ընտրելու դիզայն նախագծի տեխնիկական հաշվարկի եղանակներ և հիմնավորելու դրանք՝ կիրառելով դիզայնում կոմպոզիցիայի վիզուալ կազմակերպման, ծավալագոյացման, ֆունկցիոնալ վերլուծության, նյութերի և դրանց արտադրության, գունանկարչության, գծանկարչության, գունատեսության, էրգոնոմիկայի, բիոնիկայի և արխիտեկտոնիկայի սկզբունքները: Բ4. Մակետավորման և մոդելավորման աշխատանքներում արհեստավարժ կիրառելու քանդակի սկզբունքները և հնարները: Բ5. Դիզայնի ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների և մեթոդներ և առաջադեմ գիտելիքների հետ միասին կիրառելու սեփական գործունեությունը կազմակերպելու և մասնագիտական խնդիրները լուծելու կարողություն:</p>
<p>Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ1. Հայերեն և երկու օտար լեզուներով գրավոր և բանավոր ներկայացնելու դիզայնի նախագծեր՝ մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը և ցուցաբերելու հաղորդակցման կարողություն՝ հաշվի առնելով վիզուալ հաղորդակցության խնդիրների դիզայնի ներկայացման լուծման վրա ազդեցություն ունեցող մշակութային, սոցիալական ու անձնային գործոնները: Գ2. Աշխատելու թիմում, արդյունավետ շփվելու գործընկերների, ղեկավարության և պատվիրատուների հետ, պատասխանատվություն կրելու թիմի աշխատանքի արդյունքների համար: Գ3. Պատասխանատու լինելու սեփական կրթության համար, ինքնուրույն որոշելու հետագա մասնագիտական զարգացման խնդիրները և պլանավորելու սեփական առաջընթացը, ինչպես նաև ներկայանալի լինելու հանրությանը՝ մասնագիտական պորտֆոլիոյի միջոցով: Գ4. Մասնագիտական խնդիրների արդյունավետ լուծման նպատակով իրականացնելու անհրաժեշտ տեղեկատվության որոնում՝ օգտագործելով տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաները: Գ5. Կողմնորոշվելու արտակարգ իրավիճակներում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերելու առաջին բուժօգնություն:</p>